

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն  
Մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ  
Միկլոշ Հարաշտի

Հուլիսի 26, 2006 թ.

Մամուլի ազատության իրավիճակը Հայաստանում

Նկատառումներ և հանձնարարականներ

Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Միկլոշ Հարաշտին, ուղեկցությամբ խորհրդական Անա Կարլսրայտերի, հունիսի 2006 թ. 19-21-ը այցելեց Հայաստան: Այցը տեղի ունեցավ Հայաստանի կառավարության հրավերով և կազմակերպվել էր ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ համատեղ: Այցի նպատակն էր գնահատել մամուլի ազատության իրավիճակը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նախատեսվող օրենսդրական փոփոխություններին, որոնք բխում են 2005 թ. նոյեմբերին ընդունված Սահմանադրության փոփոխություններից:

Ներկայացուցիչը ողջունեց այցի նախապատրաստման և դրա ընթացքում հայաստանյան իշխանությունների հետ բարձր մակարդակի համագործակցությունը: Ինչպես քաղաքացիական հասարակության, այնպես էլ իշխանությունների հետ հանդիպումների ժամանակ ընդգծված կերպով հաղորդվեց մամուլի իրավիճակը բարելավելու մտադրությունը:

Ներկայացուցչին ընդունեց Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Նա հանդիպումներ ունեցավ նաև

- Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանի հետ,
- Արտաքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Բայբուրդյանի հետ (գնահատողական այցի ընթացքում արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը բացակայում էր Հայաստանից),
- Արդարադատության նախարարի տեղակալ Գևորգ Կոստանյանի հետ,
- Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի նախագահ Ալեքսան Հարությունյանի, Հանրային հեռուստատեսության գործադիր տնօրեն Արմեն Արզումանյանի և Հանրային ռադիոյի գործադիր տնօրեն Արմեն Ամիրյանի հետ:
- Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ Գրիգոր Ամալյանի հետ,
- «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիսյանի հետ,
- Ինչպես էլեկտրոնային, այնպես էլ տպագիր տարբեր լրատվամիջոցների լրագրողների, խմբագիրների և ղեկավարների հետ,
- Տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ,
- Օտարերկրացի դիվանագետների հետ:

## Ընդհանուր ակնարկ

Հայաստանն էական առաջընթաց է արձանագրել լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող օրենսդրության բարելավման բնագավառում, սակայն լրատվամիջոցների բազմակարծությունը սահմանափակված է մնում անկախ, բայց ֆինանսապես թույլ և քիչ ազդեցիկ տպագիր մամուլով:

Ինչպես նշեց Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանը, օրենքները դեռևս հետ են մնում Սահմանադրության դրույթներից: Հարկ է նաև ավելացնել, որ իրականությունն իր հերթին դեռևս հետ է մնում օրենքներից: Օրինակները ներառում են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի թերությունները, ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի դրույթների իրականացման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի բացակայությունը:

Մեծ խնդիր է հեռարձակվող լրատվության բնագավառում սահմանափակ բազմակարծությունը: Հեռարձակվող լրատվամիջոցները, բացառությամբ որոշ սահմանափակ թվով հաղորդումների, որոնք ներկայացնում են այլընտրանքային տեսակետներ, հասարակությանը հետևողականորեն չեն ներկայացնում անաչառ և բազմակարծիք տեղեկատվություն: Հեռարձակվող լրատվամիջոցները կարելի է բնութագրել որպես մեծապես պրոիշխանական, չնայած պետական հեռուստատեսության՝ հանրային հեռարձակողի վերակազմավորմանը և մի շարք մասնավոր հեռուստաալիքների գոյությանը: Համաձայն գործող օրենսդրության, կարգավորող մարմինների բոլոր անդամներն ուղղակիորեն նշանակվում են Հայաստանի նախագահի կողմից:

Տպագիր մամուլը բազմակարծիք է, լրատվությունը՝ անմիօրինակ և ժամանակ առ ժամանակ բաց քննադատական քաղաքական գործիչների նկատմամբ: Ինչևէ, քանզի մամուլի միջոցներից ոչ մեկը չի գերազանցում օրական 3000-4000 տպաքանակը, հայաստանյան տպագիր մամուլը չափազանց թույլ է և սահմանափակ դերակատարություն ունի հասարակությանը իրազեկելու գործում:

Լրատվամիջոցների սեփականության հարցում բացակայում է թափանցիկությունը, ինչը պայմանավորված է սեփականության բացահայտման թերի օրենսդրությամբ:

2005 թ. սկսած լրագրողների դեմ բռնության շատ քիչ դեպքեր են տեղի ունեցել: Ողջունելի է նաև այն, որ մի քանի տարի է զրպարտության մեղադրանքով գործեր չեն հարուցվել, չնայած դեռևս անհրաժեշտ է ամբողջությամբ ապաքրեականացնել զրպարտությունը:

Նկատի ունենալով լրատվական դաշտի բոլոր կողմերը՝ լրատվության իրավիճակը Հայաստանում կարող է հետագայում բարելավվել:

Հայաստանում լրատվության ազատության բարելավման վերաբերյալ հանձնարարականները տեղ են գտել յուրաքանչյուր գլխի վերջում և սույն զեկույցի եզրակացությունների բաժնում:

## Հեռարձակման իրավիճակը

Անկախ հեռարձակող լրատվամիջոցների բացակայություն, իրավիճակը շտկող օրենսդրական փոփոխությունների ընդունման ուշացում

Հայաստանում հեռարձակվող լրատվամիջոցները մնում են որպես տեղեկատվության հիմնական տիրապետող աղբյուր: 2001 թ. պետական հեռուստատեսությունը վերակազմավորվեց հանրային հեռարձակողի: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի տարածքում գործում են մեծ թվով մասնավոր հեռուստաընկերություններ, քաղաքական կյանքի լուսաբանումը կարող է բազմակարծության, քանզի այն սովորաբար պրոիշխանական է՝ ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային հեռարձակմամբ:

Նման իրավիճակի բացատրությունն ընկած է գործող օրենսդրական լուծումների մեջ: Հեռուստատեսության և ռադիոյի մասին գործող օրենքը նախատեսում է երկու մարմիններ՝ Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհուրդ (ՀՀՌԽ) և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով (ՀՌԱՀ): Երկու խորհուրդների անդամներն էլ նշանակվում են նախագահի կողմից, հետևաբար այս խորհուրդների կողմից ղեկավարվող կամ կարգավորվող հեռարձակվող բոլոր լրատվամիջոցները ենթակա են իշխանությունների կողմից ազդեցության:

2005 թ. ընդունված Սահմանադրության փոփոխությունն անդրադարձել է այս խնդրին: Կիրարկման պարագայում այն կբերի մասնավոր և հանրային լրատվամիջոցները կարգավորող մարմինների անդամների ընտրության մեխանիզմի փոփոխությունների: Հոդված 83.2-ը ենթադրում է Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի փոփոխություն, համաձայն որի անդամների կեսը պետք է ընտրվեն Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը պետք է նշանակվեն հանրապետության նախագահի կողմից:

Չնայած սրան, եթե նույնիսկ վերը նշված օրենսդրական փոփոխություններն արդեն ընդունված և իրականացված լինեին, իշխանական վերահսկողությունը անպայմանորեն չէր նվազի, ի մասնավորի այնպիսի ժամանակահատվածներում, երբ խորհրդարանական մեծամասնությունը և նախագահը նույն քաղաքական թիմից են:

Այս փոփոխությունները չէին լուծի նաև թվային զուգամիտման հեղափոխության («digital convergence revolution») պահանջները: Այս տարի Հեռահաղորդակցության միջազգային միությունը (ITU) տրամադրել է Հայաստանի վերգետնյա կապի հաճախականությունների տիրույթը («terrestrial frequency range»): Այն, ինչպես և հեռախոսային, արբանյակային հեռուստատեսության և ինտերնետի զուգամիտումը կբերի հնարավոր հեռուստահաճախականությունների թվի աճի: Այս ամենը կհանգեցնի լիցենզավորման ընթացակարգում համապատասխանեցումների, կառավարության կողմից ազդեցության էական նվազման՝ ապագա հեռուստաալիքների վերաբերյալ որոշումները թողնելով բուն ընկերություններին և հեռահաղորդակցության շուկայաբաժինը կարգավորող իրավական ակտերին:

Այցի ընթացքում Ներկայացուցչին հստակ տեղեկություն չի տրամադրվել Հեռուստատեսության և ռադիոյի օրենքի փոփոխություններն ընդունելու ժամկետի վերաբերյալ: Ներկայացուցչի կողմից ենթադրվում է, որ փոփոխությունները չեն ընդունվի մինչև 2007 թ. առաջիկա խորհրդարանական ընտրությունները:

Որպես առաջին քայլ, Սահմանադրության փոփոխությունով ենթադրվող օրենսդրական փոփոխությունները կառավարության կողմից պետք է նախագծվեն, հրապարակային քննարկվեն քաղաքացիական հասարակության անդամների մասնակցությամբ և

խորհրդարանի կողմից ընդունվեն հնարավորինս շուտ՝ անկասկած մինչ 2007 թ. խորհրդարանական ընտրությունները: Այնուամենայնիվ, օրենսդրական փոփոխությունները չպետք է սահմանափակվեն «կիսանախագահական-կիսախորհրդարանական» խորհրդով: Բոլոր խորհուրդների կազմերը պետք է արտացոլեն երկրի քաղաքական-հասարակական բազմազանությունը և պետք է ներառեն ՀԿ-ներ և մասնագիտական ընկերակցություններ:

## Հանրային հեռարձակում

Պետական հեռուստատեսության անբավարար վերակազմավորումը հանրային հեռարձակողի

Չնայած 2001 թ. պետական հեռուստատեսությունը վերակազմավորվեց Հ1 հեռուստաալիքի, որն առաջին հանրային հեռարձակողն էր ԱՊՀ տարածաշրջանում, այն դեռևս պետք է կատարի հանրային հեռարձակողի իր դերը:

Ֆինանսավորվելով պետական հատկացումներից և գովազդից ստացված եկամուտներով, վերակազմավորումից հետո Հ1-ը մնում է ամենաժողովրդական հեռուստաալիքը: Ի նկատի ունենալով հանրային կարծիքի վրա նրա մեծ ազդեցությունը, խնդրահարույց է այն, որ նրա խորհրդի 5 անդամներն էլ նշանակվում են նախագահ Քոչարյանի կողմից: Խորհրդի քաղաքական անկախության բացակայությունը դիտարկվում է որպես հանրային հեռարձակողի լրատվության մեջ անաչառության և բազմազանության բացակայության հիմնական պատճառներից մեկը, հանգամանք, որը հաստատվում է քաղաքացիական հասարակության կողմից վերջերս իրականացված մոնիտորինգային նախաձեռնությամբ և այցի ընթացքում զրուցակիցների կողմից:

Ներկայումս, Հ1 հեռուստաալիքը չի անցկացնում պարբերական ինքնադիտարկում, օրինակ, տարբեր քաղաքական կուսակցությունների համար եթերի մատչելիության և նրանց գործունեության լուսաբանման, կամ գովազդի սահմանափակումներին համապատասխանության վերաբերյալ: Գործադիր տնօրենը նման իրավիճակը բացատրեց ռեսուրսների սահմանափակությամբ:

Ըստ ՀՀՌԽ-ի նախագահ Ալեքսան Հարությունյանի, անգամ Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքում Մահմանադրությամբ պահանջվող փոփոխությունների կատարումից հետո, ՀՀՌԽ-ի անդամները կշարունակեն նշանակվել նախագահի կողմից և կծառայեն որպես կառավարող մարմին, որը պատասխանատու է քաղաքականության մշակման և հաղորդումների ծրագրավորման համար:

Նույնկերպ ապագա փոփոխությունները մեկնաբանեց Նախագահ Քոչարյանը՝ Ներկայացուցչի հետ զրույցի ընթացքում. հղում անելով պետական իշխանության ճյուղերի միջև լիազորությունների բաժանմանը, նա ասաց, որ ՀՀՌԽ-ի խորհրդի անդամների նշանակումը մնալու է նախագահի լիազորությունը:

Այնուամենայնիվ, խորհուրդը պետք է խորհրդանշի և ապահովի անկախություն քաղաքական ուժերից: Նախագահի կողմից նշանակված խորհուրդը անհամատեղելի է հանրային հեռարձակողին և կարող է բերել դրա աշխատանքներում իշխանությունների միջամտության:

Անկախ ՀՀՌԽ-ի նոր գործառույթից, խորհրդի անդամները չպետք է ընտրվեն մեկ քաղաքական ուժի կամ միայն քաղաքական ուժերի կողմից:

Հանրային հեռարձակողի խորհրդի ընտրության չափանիշները պետք է արտացոլեն թափանցիկությունը և ապահովեն ինչպես արհեստավարժության բարձր մակարդակ, այնպես էլ հայացքների բազմազանություն:

Հանրային հեռարձակողի բուն խնդիրներն իրագործելու համար, խորհուրդը պետք է անցկացնի տարբեր կուսակցությունների համար եթերի մատչելիության և դրանց գործունեության լուսաբանման շարունակական դիտարկում, ինչի արդյունքները պետք է հրապարակվեն:

## **Մասնավոր հեռարձակում**

### **Սահմանափակ այլընտրանքային տեսակետներ եթերում, կողմնակալ լիզենզավորող մարմին և անբավարար հակամենաշնորհային նորմեր:**

Գոյություն ունի համազգային ծածկույթ ապահովող 4 կոմերցիոն հեռուստակայան: Երկրում գործում են ընդհանուր թվով 57 հեռուստաալիքներ, որոնց համարյա կեսը հեռարձակվում են Երևանից և ունեն սահմանափակ ծածկույթ: Կան բազմաթիվ ռադիոալիքներ, որոնց դերը հիմնականում սահմանափակվում է զվարճալի ծրագրերով՝ բացառությամբ հանրային ռադիոյով վերահեռարձակվող Ազատություն ռադիոկայանի:

Չնայած հեռարձակվող բազմաթիվ մասնավոր լրատվամիջոցների գոյությանը, Ներկայացուցիչն այս դաշտում չի տեսնում հանրային կարծիքի բազմազանության համակարգված լուսաբանում:

Նախագահական ապարատից ներկայացուցչին ուղարկված նամակում տեղեկացվում է, որ ապրիլի 1-ից հունիսի 23-ը, 7 հեռուստաալիքների 11 հաղորդումներ 73 անգամ եթեր են տրամադրել ոչ-կառավարական գործիչների (նամակն անդրադառնում է նաև հանրային հեռարձակողին, նշելով, որ չնայած այն թոք-շոուներ կամ բանավեճային հաղորդումներ չի հեռարձակում, որոնք կարող էին արտացոլել այլընտրանքային տեսակետներ, բայց առանց խմբագրման լուսաբանում է խորհրդարանական քննարկումները):

Չնայած այս օրինակներին, Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ) մոնիտորինգային ուսումնասիրությունը հաստատում է, որ եթերում առկա է այլընտրանքային տեսակետների էական բացակայություն: Հինգ ամենամեծ հեռուստաալիքները (ներառյալ հանրային հեռարձակողը) հիմնականում կենտրոնանում են երկրի ղեկավարների ամենօրյա գործունեության, պետական կառույցների, քաղաքական գործիչների և ազդեցիկ գործարարների վրա:

Լիզենզավորումը ՀՌԱՀ-ի՝ մասնավոր լրատվամիջոցները կարգավորող մարմնի հիմնական խնդիրներից մեկն է: Նախագահ Քոչարյանը Ներկայացուցչին տեղեկացրեց, որ Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի առաջիկա փոփոխություններից հետո խորհրդի՝ խորհրդարանի կողմից նշանակվելիք մասը անմիջապես չի փոխվի: Փոխարենը, նոր անդամները կներգրավվեն ներկայիս անդամների մանդատների ժամկետը լրանալուց հետո: Դա կնշանակի ոչ մի էական նորարարություն ներկա համակարգում մինչև 2007 թ. խորհրդարանական ընտրությունները:

Շատ գրուցակիցներ Ա1+ և Նոյան Տապան հեռուստաալիքների օրինակները տեսնում են որպես ապացույց այն բանի, որ գործող օրենսդրական լուծումներով ՀՌԱՀ-ի լիզենզավորման գործողությունները ոչ թափանցիկ են և քաղաքական գործոններով

պայմանավորված: Շատերի կողմից որպես իշխանություններից քաղաքականապես անկախ համարվող այս ամբողջությամբ գործող հեռուստակայանների լիցենզիաների թարմացումը 2002 թ. մերժվեց: Այդ ժամանակից սկսած Ա1+ը ավելի քան 10 անգամ դիմել է, սակայն տարբեր պատճառաբանություններով մերժվել: Ա1+ի գործը ուղարկվել է և քննության ընդունվել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից (ՄԻԵԳ): Ինչպես նշվեց Արդարադատության նախարարի տեղակալի կողմից, ՄԻԵԳ-ի կողմից վերջնական որոշում ակնկալվում է մոտ ապագայում:

ՀՌ-ԱՀ-ը իրավական լիազորություն չունի ուսումնասիրելու լիցենզավորվող հայտատուների սեփականատիրական կառուցվածքը: Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի հակամենաշնորհային դրույթը սահմանում է, որ «յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ կարող է ոչ ավելի քան մեկ հեռուստատեսային և ռադիոընկերության արտոնագրատեր լինել»: Փաստացի, սա ընկերություններին հնարավորություն է տալիս ունենալ մի քանի հեռուստա/ռադիոկայաններ: Միայն անհրաժեշտ է հիմնել այնքան թվով ընկերություններ, որքան կայաններ տվյալ ֆիրման ցանկանում է ունենալ: Ինչպես հաստատվեց ՀՌ-ԱՀ-ի նախագահի կողմից, իրականում կան մարդիկ, որոնք ունեն մի քանի հեռուստակայաններ, որոնց շենքային պայմանները և աշխատակազմերը իրենց հերթին նույնն են:

Սա նշանակում է, որ չկան սեփականության բազմազանության որևէ երաշխիքներ, ինչը որևէ հասարակությունում տեղեկատվության բազմակարծիք մատչելիության հիմնաքարն է:

**Հեռուստատեսության և ռադիոյի մասին փոփոխված օրենքը պետք է նաև հստակ լինի լիցենզավորման համար անցկացվող մրցույթների ընթացակարգերի վերաբերյալ: Ընտրության չափանիշները պետք է ներառեն բազմակարծության շահերը, լիցենզավորման գործընթացը պետք է դառնա ավելի թափանցիկ՝ կիրառելով ավելի շատ քանակական, հետևաբար՝ հանրայնորեն վերահսկելի հենանիշներ:**

**Ցանկալի կլինի, որպեսզի նախատեսվող օրենքը ներառի հստակ դրույթներ շուկայաբաժնի վերաբերյալ: ՀՌ-ԱՀ-ին պետք է լիազորություն վերապահվի ստուգել մայր կազմակերպությունները՝ բացառելու հեռարձակման շուկայի մենաշնորհացումը:**

## **Գովազդ**

### **Օրենքի կանոնավոր խախտումներ վատ կիրարկման հետևանքով**

Կոմերցիոն գովազդի շուկան Հայաստանում խիստ սահմանափակ է ինչպես չափերով, այնպես էլ ծավալով: Հեռարձակվող լրատվամիջոցները գները արհեստականորեն ցածր են պահում՝ գերազանցելով թույլատրելի գովազդային ծավալը: Նման չարաշահումը հնարավոր է դառնում գովազդը կարգավորող օրենքների թերի կիրարկման պատճառով, ինչը բերում է ծավալի և բովանդակության սահմանափակումների անպատիժ մնացող խախտումների:

Գովազդի մասին օրենքը կարգավորում է գովազդը մասնավոր լրատվամիջոցներով՝ հաղորդումների հեռարձակման յուրաքանչյուր մեկ ժամի համար թույլատրելով ամենաշատը 10 րոպե գովազդ: Համաձայն IREX-Հայաստանի ուսումնասիրությունների, շատ հեռուստաընկերություններ չեն պահպանում այս դրույթները, հաճախ տեղադրելով ավելի քան 30 րոպե գովազդ հաղորդումների հեռարձակման յուրաքանչյուր մեկ ժամի դիմաց:

Գովազդի մասին օրենքը ակոհովի և ծխախոտի գովազդը հեռուստատեսությամբ արգելում է: Այնուամենայնիվ, ինչպես վերհանված է «Ինտերնյուսի» ուսումնասիրությունում, 19 հեռուստաընկերություններից միայն 8-ն են կատարել օրենքի պահանջը: ՀՌԱՀ-ի նախագահ Գրիգոր Ամայանը հիշատակեց միայն, որ սա տեղի է ունենում թաքուն ձևով. օրինակ գովազդելով ինչ-որ անունով կոչվող ջրի ապրանքանիշ, որը նման է օդու ապրանքանիշին: Հարցին, թե արդյո՞ք նա, այնուամենայնիվ, իրավասու է պատժամիջոցներ կիրառելու նման խախտումների համար, նա ասաց, որ օրենքն իր ղեկավարած մարմնին իրավասություն չի տալիս թաքնված գովազդի դեպքում կիրառելու պատժամիջոցներ:

Ներկայումս ՀՌԱՀ-ը կանոնավոր դիտարկումներ չի անցկացնում: Համաձայն նախագահի կողմից ներկայացված բացատրության, նրանք չունեն դիտարկում անցկացնելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և յուրաքանչյուր օր կարողանում են հետևել միայն 8 հեռուստաալիքների:

Խորապես մտահոգիչ է, որ հանրային հեռարձակողը գովազդի ծավալները խախտողների շարքում է: IREX-հայաստանը պնդում է, որ ժամանակային որևէ միավորով հաշված (ժամ, օր, շաբաթ) հանրային հեռարձակողը միջինը երեք անգամ գերազանցում է օրենքով սահմանված ծավալը:

Նման բացառիկ իրավիճակը ՀՌԱՀ-ի նախագահի կողմից բացատրվեց որպես օրենքի ընձեռած հնարավորությունը անելու երկակի մեկնաբանություններ: Նա հղում կատարեց Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքին, որն ի տարբերություն Գովազդի մասին օրենքի, մասնավորեցնում է, որ գովազդի ծավալը պետք է կազմի հեռուստահաղորդումների ամենաշատը 5 %-ը, առանց հստակեցնելու, թե որ ժամանակահատվածում պետք է այդ 5 %-ը հաշվվի և միջինացվի: Նրանք գերադասում են, նա ասաց, սա մեկնաբանել որպես օրական ծավալ (այսպիսով, օրինակ, թույլատրելով լավ ժամերին անսահմանափակ ծավալի գովազդ):

Գովազդային սահմանափակումների այս չարաշահումը եկամուտների հնարավոր աղբյուրը հեռացնում է տպագիր մամուլից, այսպիսով վտանգելով կայուն, հավասարակշռված լրատվական շուկայի և բազմամատչելի տեղեկատվության զարգացումը:

**Գովազդի մասին օրենքների կիրարկումը պետք է պատշաճ վերահսկվի՝ ապահովելու բազմազան գովազդային շուկայի զարգացումը:**

**Նոր օրենքը պետք է ՀՌԱՀ-ին ապահովի ավելի մեծ լիազորություն՝ դիտարկման ենթարկելու գովազդի բովանդակությունը և հաճախականությունը, ներառյալ թաքնված գովազդը:**

**Հանրային և մասնավոր հեռարձակողների համար գովազդի սահմանափակումները պետք է կարգավորվեն մեկ օրենքով:**

**Հետևելով միջազգային չափանիշներին, օրենքը պետք է մասնավորեցնի, որ գովազդային ծավալները պետք է հաշվարկվեն հաղորդումների հեռարձակման մեկ ժամի հաշվով:**

## **Տպագիր մամուլի իրավիճակը**

### **Ազատ, բայց ֆինանսապես թույլ, սահմանափակ ազդեցությամբ**

Լրատվամիջոցների լուրջ բազմազանությունը սահմանափակված է մնում տպագիր մամուլով, որտեղ լրատվությունը բազմազան է, ժամանակ առ ժամանակ բաց քննադատական բոլոր ուղղվածության քաղաքական գործիչների նկատմամբ: Այնուամենայնիվ, մամուլի որևէ միջոց չի գերազանցում օրական 3000-4000 տպաքանակը և Հայաստանի տպագիր մամուլը կարելի է բնութագրել որպես բացառապես թույլ, որը սահմանափակ դերակատարություն ունի հասարակությանը իրազեկելու գործում: Կան տպագիր մամուլի մի քանի պետական միջոցներ, սակայն դրանց տպաքանակը չի հասնում այն չափերի, որ խոչընդոտներ ստեղծի բազմակարծության համար:

Մամուլի ֆինանսական տկարության հիմնական պատճառները կարող են բացատրվել կոմերցիոն սահմանափակ գովազդային շուկայով և տարածման համակարգի թերություններով:

Մամուլի տարածման անբավարար համակարգի մասով Ներկայացուցչի ուշադրությունը հրավիրվեց «Փոստային կապի մասին» օրենքը լրամշակելու անհրաժեշտության վրա: Օրենսդրության այս բաղադրիչը լրատվական ՀԿ-ների կողմից դիտարկվում է որպես գրաքննության թաքնված ձև: Համաձայն այս օրենքի, մամուլի տարածմամբ զբաղվող մասնավոր ընկերությունները թերթերը տարածելու համար պետք է մուծեն վճարներ: Կիրարկվելու դեպքում այս օրենքը կբերի մամուլի տարածմամբ զբաղվող շատ փոքր ընկերությունների դուրսնումանը շուկայից և թերթերի տարածման ծառայությունը կդնի պետության հետ կապված երկու ձեռնարկությունների՝ Հայփոստի՝ Հայաստանի փոստային ծառայության և Հայմամուլի՝ կրպակային հիմնական վաճառողի ձեռքերում:

**Ինչպես համաձայնեցվել է Արդարադատության նախարարության հետ, ոչ բաժանորդագրումը և ոչ էլ տարածումը չպետք է ենթակա լինեն լիցենզավորման:**

Լրատվամիջոցների բազմազանությունը խրախուսելու համար կառավարությունը պետք է դիտարկի տպագիր մամուլի հատուկ պաշտպանության ներդրումը, օրինակ՝ տարածման օժանդակ համակարգ, ԱԱՀ-ի կամ հարկային արտոնություններ:

## **Տեղեկատվության մատչելիություն**

### **Տեղեկատվության ազատության մասին օրենքի ոչ բավարար կիրարկում**

Չնայած Հայաստանն ընդունել է ԱՊՀ երկրներում «Տեղեկատվության ազատության մասին» ամենաառաջադիմական օրենքներից մեկը, տեղեկատվության մատչելիությունը լրատվական դաշտի ներկայացուցիչների համար մնում է սահմանափակ: Այս երևույթը բացատրվում է օրենքի թերի կիրարկմամբ:

Իրավիճակը բարելավելու համար Հայաստանի Տեղեկատվության ազատության կենտրոնը (ՀՏԱԿ) մշակել է օրենքի պատշաճ կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտեր: Ինչևէ, մինչ օրս կառավարությունը հավանության չի արժանացրել այս նախագծերը: Պատճառն այն է, որ դրանք հիմնվում են Տեղեկատվության ազատության մասին օրենքի այն դրույթների վրա, որոնք կառավարությունը ցանկանում է փոփոխել: Դրանք են Հոդված 5-ը՝ Տեղեկատվության գրանցում, դասակարգում ու պահպանում և 10-ը՝ Տեղեկատվության տրամադրման պայմանները: Մյուս կողմից, սույն դրույթները օրենքի ամենաառաջադիմական մասն են, որոնց անհապաղ կիրարկումն արդարացված է:



Օրենքի կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ է ենթաօրենսդրական ակտերի հրապարակային քննարկում և ընդունում:

Հոդված 5-ը և 10-ը տեղեկատվության ազատության կարևոր երաշխիքներ են, և դրանք չպետք է ենթակա լինեն փոփոխությունների կամ լրացումների:

### **Ջրպարտությանը և վիրավորանքին վերաբերող օրենսդրությունը**

#### **Ջրպարտությունը և վիրավորանքը դեռևս մնում են քրեորեն պատժելի**

Մի քանի տարի է զրպարտության մեղադրանքով քրեական գործեր չեն հարուցվել: 2004 թ. Քրեական օրենսգիրքը փոփոխության ենթարկվեց և զրպարտության համար ազատազրկումը պատժի տեսակ մնաց միայն այն դեպքում, երբ օրինախախտումը միևնույն անձի կողմից տեղի է ունենում մեկ անգամից ավելի: Ջրպարտության համար կիրառելի է մինիմալ աշխատավարձի հազարապատիկի չափով քրեական նյութական տուգանք: Այնուհետև, Քրեական օրենսգրքի Հոդված 318-ը հատուկ պատասխանատվություն է սահմանում «իշխանության ներկայացուցչին վիրավորելու համար»:

Ներկայացուցիչը ողջունեց 2004 թ. բարեփոխումները այն համարելով առաջադիմական: Միևնույն ժամանակ, այս բարեփոխումները պետք է ավարտուն տեսքի հասցվեն:

**Ջրպարտությունը պետք է ամբողջությամբ ապաքրեականացվի:**

**Ջրպարտության քրեական մեղադրանքի համար կարող է ներմուծվել մորատորիում մինչև ապաքրեականացման փոփոխությունները մշակվեն և ընդունվեն:**

Հոդված 318-ը «իշխանության ներկայացուցչին վիրավորելու» մասին պետք է ուժը կորցրած ճանաչել:

Քաղաքացիական դատարանների համար պետք է ուղեցույցներ ներմուծվեն ապահովելու, որ զրպարտության քաղաքացիական գործերի դեպքում մեղադրանքը համարժեք լինի վնասի չափին:

Պետք է ստեղծվի զանգվածային լրատվամիջոցների ինքնակարգավորման արդյունավետ մարմին և այն պետք է միջնորդի դեր ստանձնի լրատվամիջոցներին վերաբերող վեճերում:

### **Հետագա համագործակցությունը և գործողությունները**

#### **ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակը դիտարկում է ուսուցման մի շարք դասընթացներ**

Հայաստանյան իշխանությունները պատրաստակամություն հայտնեցին Ներկայացուցչի գրասենյակի հետ հետագա համագործակցության մի շարք հարցերի վերաբերյալ: Փոխարտգործնախարար Արմեն Բայբուրդյանի հետ հանդիպման ժամանակ Ներկայացուցչին ուսուցողական ծրագրեր առաջարկեց լրատվական ծառայությունների կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ՝ օժանդակելու մամուլի և

հանրային լրատվության պատասխանատուներին: Բացի այդ, ուսուցողական ծրագրեր կարող են իրականացվել նաև ինքնակարգավորման բնագավառում: Ներկայացուցիչը նաև լիահույս է, որ Հայաստանյան դերակատարներն ակտիվորեն կմասնակցեն Մամուլի ազատության հարցերով Ներկայացուցչի ամենամյա համաժողովին, որը տեղի կունենա Վրաստանում, Թբիլիսիում 2006 թ. նոյեմբերի 2-3-ը և վերնագրված է «Լրատվամիջոցները որպես բիզնես»:

Ներկայացուցչի գրասենյակը շարունակում է իր օրենսդրական փորձագիտությունն առաջարկել՝ օգնելու Հայաստանին անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները ավարտելու հարցում:

## Հանձնարարականներ

### Հեռարձակման իրավիճակը

- Որպես առաջին քայլ, Սահմանադրության փոփոխությունով ենթադրվող օրենսդրական փոփոխությունները կառավարության կողմից պետք է նախագծվեն, հրապարակային քննարկվեն քաղաքացիական հասարակության անդամների մասնակցությամբ և խորհրդարանի կողմից ընդունվեն հնարավորինս շուտ՝ անկասկած, մինչ 2007 թ. խորհրդարանական ընտրությունները:
- Այնուամենայնիվ, օրենսդրական փոփոխությունները չպետք է սահմանափակվեն «կիսանախագահական-կիսախորհրդարանական» խորհրդով: Բոլոր խորհուրդների կազմերը պետք է արտացոլեն երկրի քաղաքական-հասարակական բազմազանությունը և պետք է ներառեն ՀԿ-ներ և մասնագիտական ընկերակցություններ:

### Հանրային հեռարձակում

- Անկախ ՀՀՌԽ-ի նոր գործառնությունից, խորհրդի անդամները չպետք է ընտրվեն մեկ քաղաքական ուժի կամ միայն քաղաքական ուժերի կողմից:
- Հանրային հեռարձակողի խորհրդի ընտրության չափանիշները պետք է արտացոլեն թափանցիկությունը և ապահովեն ինչպես արհեստավարժության բարձր մակարդակ, այնպես էլ հայացքների բազմազանություն:
- Հանրային հեռարձակողի բուն խնդիրներն իրագործելու համար, խորհուրդը պետք է անցկացնի տարբեր կուսակցությունների համար եթերի մատչելիության և դրանց գործունեության լուսաբանման շարունակական դիտարկում, ինչի արդյունքները պետք է հրապարակվեն:

### Մասնավոր հեռարձակում

- Հեռուստատեսության և ռադիոյի մասին փոփոխված օրենքը պետք է նաև հստակ լինի լիցենզավորման համար անցկացվող մրցույթների ընթացակարգերի վերաբերյալ: Ընտրության չափանիշները պետք է ներառեն բազմակարծության շահերը, լիցենզավորման գործընթացը պետք է դառնա ավելի թափանցիկ՝ կիրառելով ավելի շատ քանակական, հետևաբար՝ հանրայնորեն վերահսկելի հենանիշներ:

- Ցանկալի կլինի, որպեսզի նախատեսվող օրենքը ներառի հստակ դրույթներ շուկայաբաժնի վերաբերյալ: ՀՌ-ԱՀ-ին պետք է լիազորություն վերապահվի ստուգել մայր կազմակերպությունները՝ բացառելու հեռարձակման շուկայի մենաշնորհացումը:

#### Գովազդ

- Գովազդի մասին օրենքների կիրարկումը պետք է պատշաճ վերահսկվի՝ ապահովելու բազմազան գովազդային շուկայի զարգացումը:
- Նոր օրենքը պետք է ՀՌ-ԱՀ-ին ապահովի ավելի մեծ լիազորություն՝ դիտարկման ենթարկելու գովազդի բովանդակությունը և հաճախականությունը, ներռյալ թաքնված գովազդը:
- Հանրային և մասնավոր հեռարձակողների համար գովազդի սահմանափակումները պետք է կարգավորվեն մեկ օրենքով:
- Հետևելով միջազգային չափանիշներին, օրենքը պետք է մասնավորեցնի, որ գովազդային ծավալները պետք է հաշվարկվեն հաղորդումների հեռարձակման մեկ ժամի հաշվով:

#### Տպագիր մամուլ

- Ինչպես համաձայնեցվել է Արդարադատության նախարարության հետ, ոչ բաժանորդագրումը և ոչ էլ տարածումը չպետք է ենթակա լինեն լիցենզավորման:
- Լրատվամիջոցների բազմազանությունը խրախուսելու համար կառավարությունը պետք է դիտարկի տպագիր մամուլի հատուկ պաշտպանության ներդրումը, օրինակ՝ օժանդակ տարածման համակարգ, ԱԱՀ-ի կամ հարկային արտոնություններ՝

#### Տեղեկատվության մատչելիություն

- Օրենքի կիրարկումն ապահովելու հասարակացման անհրաժեշտ է ենթաօրենսդրական ակտերի հրապարակային քննարկում և ընդունում:
- Հոդված 5-ը և 10-ը տեղեկատվության ազատության կարևոր երաշխիքներ են և դրանք չպետք է ենթակա լինեն փոփոխությունների կամ լրացումների:

#### Զրպարտությանը և վիրավորանքին վերաբերող օրենսդրություն

- Զրպարտությունը պետք է ամբողջությամբ ապաքրեականացվի:
- Զրպարտության քրեական մեղադրանքի համար կարող է մորատորիում ներմուծվել մինչև ապաքրեականացման փոփոխությունները մշակվեն և ընդունվեն:

- Հոդված 318-ը «իշխանության ներկայացուցչին վիրավորելու» մասին պետք է ուժը կորցրած ճանաչել:
- Քաղաքացիական դատարանների համար պետք է ուղեցույցներ ներմուծվեն ապահովելու, որ զրպարտության քաղաքացիական գործերի դեպքում մեղադրանքը համարժեք լինի վնասի չափին:
- Պետք է ստեղծվի զանգվածային լրատվամիջոցների ինքնակարգավորման արդյունավետ մարմին և այն պետք է միջնորդի դեր ստանձնի լրատվամիջոցներին վերաբերող վեճերում: